

## ԳՈՎԱԶԴԴՅԻՆ ՎԻՃԱԿԱԽԱՂԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԴԻԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Գովազդային վիճակախաղը (այսուհետ՝Վիճակահանություն) անցկացվում է «Դինո» ՓԲԸ (այսուհետ՝ Կազմակերպիչ) կողմից:
2. Վիճակահանության մասնակցության հնարավորություն կստանան 2024թ. հուլիսի 22-ի Երևանի ժամանակով ժամը 00:00-ից սկսած մինչև 2024թ. օգոստոսի 22-ը Երևանի ժամանակով ժամը 23:59 ներառյալ [www.eventhub.am](http://www.eventhub.am) ([www.venue.eventhub.am](http://www.venue.eventhub.am)) կայքից տոմսի/տոմսերի գնում կատարած ֆիզիկական անձինք (այսուհետ՝ Մասնակից), բացառությամբ մինչև վիճակահանության ամփոփման օրը սույն կետով սահմանված պահանջների պահանջմամբ գնված տոմսի/տոմսերի վերադարձ իրականացրած Մասնակիցների:
3. Յուրաքանչյուր Մասնակից Վիճակահանությանը մասնակցում է 1 անգամ՝ անկախ գնված տոմսերի և կատարած գնումների քանակից:
4. Մասնակցի՝ Վիճակահանությանը մասնակցելու իրավունքը ծագում է սույն պայմաններին համապատասխան Վիճակահանությանը մասնակցելու մասին հաղորդագրությունը Մասնակցի կողմից տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեին ստացվելու պահից:
5. Վիճակահանությանը մասնակցելու դեպքում՝ հաղթող Մասնակիցը կստանա նվեր 1 հատ iPhone 15 Pro, 128ԳԲ սմարթֆոն (այսուհետ՝ Մրցանակ):
6. Վիճակահանության ընթացքում հաղթող կճանաչվի այն Մասնակիցը, ում հեռախոսահամարը պատահականության սկզբունքով կընտրվի Վիճակահանության ընթացքում:
7. Վիճակահանության արդյունքների ամփոփումը կիրականացվի Կազմակերպչի Facebook (Eventhub) էջի միջոցով օգոստոսի 23-ին 19:00 Երևանի ժամանակով: Վիճակահանության ամփոփման օրվա և ժամի (Երևանի ժամանակով) փոփոխության դեպքում բոլոր Մասնակիցները կձանուցվեն գնում կատարելու ընթացքում իրենց իսկ գրանցած էլեկտրոնային փոստի հասցեով:
8. Վիճակահանության ամփոփումից հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում հաղթող Մասնակցի հետ հաստատման անհնարինության դեպքում (հաղթող Մասնակցի չպատասխանելու, անհասանելի լինելու, Կազմակերպչին սխալ/թերի տվյալներ հաղորդած լինելու կամ այլ) կամ Մրցանակից հրաժարվելու դեպքում Վիճակահանության արդյունքները տվյալ Մասնակցի համար համարվում են ուժը կորցրած:
9. Կազմակերպիչը հաղթող Մասնակցին Մրցանակի փոխարեն գումարի տրամադրում չի իրականացնում և Մրցանակը չի փոխարինում այլ նվերով:
10. Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում VPOS-տերմինալների խափանման (այդ թվում՝ կապի), անսարքության պատճառով չիրականացված, ոչ պատշաճ իրականացված և/կամ իրականացված, սակայն այնուհետև չեղարկված գնումների համար, որոնց արդյունքում ֆիզիկական անձինք գրկվում են Վիճակահանությանը մասնակցելու իրավունքից և/կամ կրում են ցանկացած այլ նյութաիրավական հետևանքներ:
11. Կազմակերպիչն իրավունք ունի հրաժարվել Մրցանակը տրամադրելուց, եթե Վիճակահանության Մասնակցի կողմից կատարվել է Վիճակահանության պայմանների խախտում և (կամ) զեղծարարարություն և (կամ) չարաշահում:
12. Վիճակահանության հաղթողի համաձայնությունը վերջինիս անունը, ազգանունը, նկարները Կազմակերպչի պաշտոնական կայքում և (կամ) սոցիալական կայքերի պաշտոնական էջերում տեղադրվեն, ինչպես նաև Մրցանակը փոխանցելու ընթացքում տեսա-լուսա-ձայնա

Նկարահանման և հրապարակման վերաբերյալ համարվում է տրված Վիճակահանությանը մասնակցելու ուժով, ինչը ակնհայտորեն վկայում է Վիճակահանության հաղթող հանդիսացող ֆիզիկական անձի համաձայնության մասին առ այն, որ վերջինիս՝ սույն կետում նշված անձնական տվյալները օգտագործվեն Կազմակերպչի կողմից:

13. Հաղթող Մասնակցին Կազմակերպիչը կտեղեկացնի հաղթող ճանաչվելու, Մրցանակը ստանալու վայրի ու ժամանակի մասին գնման ընթացքում գրանցած էլեկտրոնային փոստի հասցեին նամակ ուղարկելու և/կամ գնման ընթացքում գրանցած բջջային հեռախոսահամարին զանգ կատարելու միջոցով՝ Վիճակահանության ամփոփումից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:
14. Մրցանակը ստանալու համար Հաղթող Մասնակիցը պետք է անձամբ մոտենա Կազմակերպչի կողմից նշված վայրը Վիճակահանության ամփոփումից հետո 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ: Ընդ որում, Մրցանակի հանձնումը Հաղթող Մասնակցին Կազմակերպչի կողմից տեղի կունենա հանձնման-ընդունման ակտով:
15. Նշված ժամկետում Մրցանակը չվերցնելու դեպքում այն համարվում է անվավեր, եթե մինչև սույն պայմանների 14-րդ կետում նշված ժամկետի լրանալը Հաղթող Մասնակիցը նախապես գրավոր չի համաձայնացրել Կազմակերպչի հետ Մրցանակն ավելի ուշ ստանալու կամ այն լիազորված անձի միջոցով ստանալու հնարավորությունը, կարգն ու ժամկետները:
16. Կազմակերպիչը իրավասու է փոփոխել Վիճակահանության անցկացման պայմանները՝ այդ մասին անհապաղ ծանուցելով այն ձևով, ինչ ձևով կատարվել է Վիճակահանության վերաբերյալ հրապարակային ծանուցումը:
17. Մասնակցելով Վիճակահանությանը՝ Մասնակիցների լիովին և անվերապահ համաձայնությունը սույն Պայմաններին համարվում է տրված:
18. Սույն պայմանների՝ տարբեր լեզուներով հրապարակված տարբերակների միջև անհամապատասխանություն բացահայտվելու, ինչպես նաև օտար լեզվով հրապարակված պայմաններում առկա տեղեկատվությունը ոչ ամբողջական լինելու դեպքում անհրաժեշտ է ղեկավարվել պայմանների հայերեն տարբերակով:

Մանրամասն տեղեկությունների համար՝

- [www.eventhub.am/giveaway](http://www.eventhub.am/giveaway)
- Հեռախոսահամար՝ +374 (99) 54 55 77
- Սոցիալական կայքեր՝ Facebook (Eventhub), Instagram (eventhub.am)

Գովազդային վիճակահանության կազմակերպիչ՝ «Դինո» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 2

Հեռ.՝ +374 (99) 54 55 77